ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անունը, ազգանունը

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

2019 թվականի մարտի 13-15-ը, Ավստրիայի Հանրապետություն, Վիեննա

4. Հրավիրող կողմը

ՄԱԿ-ի Թմրամիջոցների դեմ պայքարի հանձնաժողով (CND)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՄԱԿ-ի Թմրամիջոցների դեմ պայքարի հանձնաժողովի 62-րդ նստաշրջանի նախարարական մասին

6. Քննարկված թեմաները

Հանդիպմանը մասնակցում էին տարբեր երկրների նախագահներ, արտաքին գործերի, առողջապահության և այլ նախարարներ, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար այլ անձինք:

Համաժողովին ներկայացվեցին ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից մշակված այն ծրագրերը, որոնց միջոցով հնարավոր է հասնել թմրամիջոցների դեմ պայքարի համաշխարհային խնդրի լուծմանը: Անդրադարձ կատարվեց թմրամիջոցների համաշխարհային խնդրի ինտեգրացված և հավասարակշռված ռազմավարությանը՝ ուղղված քաղաքական հռչակագրի և գործողությունների ծրագրի ներդրման գործընթացին: Նշեմ, որ Հայաստանն ակտիվորեն մասնակցել է վերոհիշյալ աշխատանքներին:

Նախարարական նստաշրջանի ընթացքում կազմակերպվել էին նաև կլոր սեղաններ, որոնց ժամանակ քննարկվեց թմրամիջոցների համաշխարհային խնդրի և դրա դեմ պայքարի նպատակով համատեղ պարտավորությունների իրականացման ընթացքը, վերլուծվեցին առկա և նոր ծագող մարտահրավերները, խնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև ընդգծվեց թմրամիջոցների համաշխարհային խնդրի և դրա դեմ պայքարի նպատակով երկրների ջանքերի ակտիվացման, միջոլորտային և միջազգային համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նախարարական նստաշրջանին հանդես եմ եկել ելույթով, որտեղ ներկայացրել եմ Հայաստանում թմրանյութերի դեմ պայքարի ոլորտում իրականացվող քաղաքականությունը, միջոլորտային և միջազգային համագործակցության ընթացքն ու վերջինիս արդյունքները: Նշել եմ, որ Հայաստանը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացման խթանումը համարում է առաջնային կարևոր գործիք՝ ապահովելով ներգրավված ներքին բարեփոխումների իրականացումը, որը հիմնված է ոչ խտրական մոտեցման վրա՝ «Չանտեսել ոչ մեկին» կարգախոսի շրջանակում:

Խորապես համոզված լինելով, որ թմրամիջոցներից զերծ աշխարհի մեր ընդհանուր նպատակը կարող է իրականանալ միայն իրազեկության բարձրացման, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային մակարդակներում համագործակցության ջանքերի ուժեղացման միջոցով՝ ընդգծել եմ համընդհանուր Կայուն զարգացման նպատակների պատշաճ իրականացման առանձնահատուկ նշանակությունը վերը նշված ոլորտում:

Վիեննա այցի շրջանակներում ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվել են երկրներում իրականացվող ծրագրերը, բարեփոխումները, նորամուծությունները և մասնագիտական այլ հարցեր:

Հանդիպել եմ նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) «Impact» առաքելությունների պատասխանատուներ Բեատրիս Լահուպի և Արսեն Յուրիչի հետ: Քննարկել ենք առաջիկայում սպասվող ԱԷՄԳ առաքելության

այցը Հայաստան, որն իրականացնելու է երկրի ուռուցքաբանական կարողությունների գնահատում: Քննարկվել են նաև համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նստաշրջանի նախարարական հատվածի ժամանակ հաստատվեց «Թմրամիջոցների համաշխարհային խնդրին դիմակայելու և հակազդելու մեր համատեղ պարտավորությունների կատարման իրականացումն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում գործողությունների ամրապնդման մասին» նախարարական հռչակագիրը:

9. Առաջարկությունները

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ջանքեր ներդնել համագործակցող կողմերի միջև առկա միջոլորտային, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունների ամրապնդման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X_____

2019 թ. մարտի 20